ՀՏԴ 582. 284 *Մենագրություն*

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԺԱՆԳԱՍՆԿԵՐԻ ԿԱՐԳԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Գ. Մարգարյան

Ժանգասնկերը պատկանում են բարձրակարգ սնկերի Eumycota բաժնի Urediniomycetes դասի Uredinales կարգին: Բազիդիավոր սնկերի շարքում ժանգասնկերը նկատելիորեն առանձնացված խումբ են: Կարգի ներսում ցեղերի ենթաբաժինները համեմատաբար կայուն են և մենկուսացված՝ բացառությամբ մի շարք արևադարձային և մերձարևադարձային ժանգասնկերի տեսակների (1):

ԼՂՀ տարածքում առաջին անգամ կատարվել են հատուկ ուսումնասիրություններ ժանգասնկերի տեսակային կազմի բացահայտման ուղղությամբ (2-6):

Հիմնվելով իրականացված հետազոտական աշխատանքների վրա և օգտագործելով տարբեր գրական աղբյուրների մշակումներ՝ ուսումնասիրվող տարածքում հայտնաբերվել և նույնականացվել են 130 տեսակի ժանգասնկեր՝ ընդգրկված 6 ընտանիքների 10 ցեղերում (7-9):

Նշված սնկերից 44 տեսակները ԼՂՀ-ում հայտնաբերվել են առաջին անգամ: Ժանգասնկերի տեսակների բաշխվածությունն ըստ կատեգորիաների (ընտանիք, ցեղ, տեսակ) ներկայացվում է աղյուսակի տեսքով (աղ. 1):

Uredinales կարգի տեսակների բաշխվածությունն ըստ ընտանիքների, ցեղերի և տեսակների

Աղյուսակ 1

Հ.հ.	Ընտանիք	Ցեղ	Տեսակ	Տեսակների թիվն ընտանիքում
1	Pucciniaceae	*Gymnosporangium*	6 (2)*	109
		Puccinia	83 (24)	
		Uromyces	20 (8)	
2	Phragmidiaceae	*Phragmidium*	8 (4)	8
3	Melampsoraceae	*Melampsora*	6 (3)	6
4	Pucciniastraceae	*Pucciniastrum*	2	2
5	Uropyxidaceae	*Tranzschelia*	1 (1)	1
6	Coleosporiaceae	*Coleosporium*	1	1
Անամորֆ ձևեր		*Aecidium*	2(2)	3
		Milesia	1	
Ընդամենը՝ 6		10	130 (44)	130

*փակագծերում տրված են ԼՂՀ-ում առաջին անգամ հայտնաբերված տեսակների թիվը:

ԼՂՀ ժանգասնկերի կարգաբանական վերլուծությունից ակնհայտ է, որ թվաքանակով առավել հարուստ է Pucciniaceae ընտանիքը: Հայտնաբերվել է նշված ընտանիքին պատկանող 3 ցեղ (*Gymnosporangium, Puccinia, Uromyces)* և 109 տեսակ:

Gymnosporangium ցեղից հայտնաբերվել են 6 տեսակներ, որոնցից 2-ը ԼՂՀ-ում առաջին անգամ են հանդիպում: Նշված ցեղից առավել տարածված տեսակ է *Gymnosporangium confusum*-ը:

Pucciniaceae ընտանիքին պատկանող *Puccinia* ցեղից հայտնաբերվել են 83 տեսակներ, որոնցից 24-ն առաջին անգամ են հայտնաբերվել: Այս ցեղը տեսակների թվաքանակով առաջնային է: Լայնորեն տարածված են *Puccinia bardanae, P. malvacearum, P. menthae, P. nigrescens, P. violae* տեսակները: Դրանցից *P. bardanae*-ն նոր է ԼՂՀ միկոբիոտայում և հայտնաբերվել է ուսումնասիրության գրեթե բոլոր տարիներին:

Տարածվածությամբ երկրորդ տեղն է զբաղեցնում *Uromyces* ցեղը: Նույնականացվել են այս ցեղին պատկանող 20 տեսակներ, որոնցից 8-ը ԼՂՀ միկոբիոտայում նոր տեսակներ են: Նշված ցեղին պատկանող *Uromyces appendiculatus, U. fallens, U. rumicis* ժանգասնկերը ԼՂՀ-ում հաճախ հանդիպող տեսակներ են և հայտնաբերվել են առաջին անգամ:

Հայտնաբերված այլ ընտանիքների ցեղերի և ժանգասնկերի տեսակների թիվը ցածր է. Phragmidiaceae ընտանիքից հայտնաբերվել է մեկ ցեղ (*Phragmidium*) և 8 տեսակ, որոնցից 4-ը նոր տեսակներ են ԼՂՀ-ում: Նշված ցեղին պատկանող լայնորեն տարածված ներկայացուցիչներից են *Phragmidium tuberculatum, Ph. mucronatum, Ph. violaceum* տեսակները և այլն: Վերջին երկուսը ԼՂՀ-ում հայտնաբերվել են առաջին անգամ:

Melampsoraceae ընտանիքից հայտնաբերվել է՝ մեկ ցեղ (*Melampsora*) և 6 տեսակ, Pucciniastraceae ընտանիքից՝ մեկ ցեղ (*Pucciniastrum*) և 2 տեսակ, Coleosporiaceae և Uropyxidaceae ընտանիքներից մեկական ցեղեր (*Coleosporium, Tranzschelia*) և մեկական տեսակներ:

Melampsora ցեղին պատկանող 6 տեսակներից 3-ը ԼՂՀ-ում հայտնաբերվել են առաջին անգամ: Հանրապետության տարածքում առավել հաճախ է հանդիպում *Melampsora coleosporioides*-ը, որը նաև նոր տեսակ է:

Pucciniastrum ցեղից հայտնաբերվել են հազվադեպ հանդիպող 2 տեսակներ՝ *Pucciniastrum agrimoniae* և *P. circaeae:*

Coleosporium ցեղից հայտնաբերվել է միայն *Coleosporium tussilaginis* լայնորեն տարածված տեսակը:

Tranzschelia ցեղից հայտնաբերվել է *Tranzschelia pruni-spinosae* սունկը, որը ԼՂՀ միկոբիոտայում նոր և լայնորեն տարածված տեսակ է:

Հայտնաբերվել են նաև 2 անամորֆ ձևեր՝ *Aecidium* և *Milesia*, համապատասխանաբար սնկերի 2 (*Aecidium euphorbiae, A. primulinum*) և 1 (*Milesia feurichii*) հազվադեպ հանդիպող տեսակներով:

ԼՂՀ տարածքում հայտնաբերված ժանգասնկերի կարգաբանական վերլուծությունն արտահայտված տոկոսներով բերվում է աղյուսակի տեսքով (աղ. 2):

ԼՂՀ-ում հայտնաբերված ժանգասնկերի ցեղերը

Աղյուսակ 2

Ցեղ	Տեսակ	
	Թվային ցուցանիշ	Տոկոսային ցուցանիշ (%)
Aecidium	2	1,5
Coleosporium	1	0,8
Gymnosporangium	6	4,6
Melampsora	6	4,6
Milesia	1	0,8
Phragmidium	8	6,2
Puccinia	83	63,8
Pucciniastrum	2	1,5
Tranzschelia	1	0,8
Uromyces	20	15,4
Ընդամենը	130	100

Այսպիսով, հետազոտման ժամանակահատվածում նույնականացված 130 տեսակի ժանգասնկերից 83-ը *Puccinia* ցեղի ներկայացուցիչներ են և կազմում են ընդհանուր թվի 63,8 %-ը: Տարածվածությամբ երկրորդ տեղն են զբաղեցնում *Uromyces* ցեղի սնկերը (թվով 20 տեսակ), որոնք կազմում են հայտնաբերված սնկերի 15,4 %-ը:

Phragmidium ցեղի սնկերը թվով 8-ն են և կազմում են 6,2 %-ը, *Gymnosporangium* և *Melampsora* ցեղերից հայտնաբերվել են վեցական տեսակներ և համապատասխանաբար կազմում են 4,6 %: *Aecidium* և *Pucciniastrum* ցեղերից հայտնաբերվել են երկուական տեսակներ և կազմում են 1,5 %: *Coleosporium, Milesia* և *Tranzschelia* ցեղերից հայտնաբերվել են մեկական տեսակներ և կազմում են 0,8 %:

Գրականություն

1. Азбукина З.М., Ржавчинные грибы (Низшие растения, грибы и мохообразные), - Владивосток, “Дальнаука”, 2005, 615 с.
2. Մարգարյան Գ.Գ., Լեռնային Ղարաբաղում հանդիպող ժանգասնկերի զարգացման առանձնահատկությունները, «ԱրՊՀ Գիտական տեղեկագիր»1 (14), Ստեփանակերտ, 2007, էջ 68 - 70:
3. Մարգարյան Գ.Գ., Ժանգասնկերով ախտահարված բույսերի տարածվածությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում, «ԱրՊՀ Գիտական տեղեկագիր» 2 (20), Ստեփանակերտ, 2009, էջ 42 - 46:
4. Մարգարյան Գ.Գ., ԼՂՀ-ում ժանգասնկերով ախտահարված տեր - բույսերի խմբավորումն ըստ տնտեսական նշանակության, Միջազգային գիտաժողով

նվիրված ԼՂՀ և ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձին, Մեսրոպ Մաշտոց Համալսարան, Երևան, 2011, էջ 649 - 655:
5. Նանագյուլյան Ս.Գ., Մարգարյան Գ.Գ., Նյութեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (ԼՂՀ) հանդիպող ժանգասնկերի վերաբերյալ, ԵՊՀ գիտական տեղեկագիր. բնական գիտություններ, - 2008, 3, էջ 131 - 136:
6. Նանագյուլյան Ս.Գ., Մարգարյան Գ.Գ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժանգասնկերի խմբավորումն ըստ տեր - բույսերի, «Հայաստանի կենսաբանական հանդես», 2009, (61). - հատոր 1. էջ 65 - 68:
7. Ульянищев В.И., Микофлора Азербайджана, Баку, Изд-во АН Азерб. ССР, 1959, Т. 2, - 443 с.
8. Ульянищев В.И., Микофлора Азербайджана, Баку, Изд-во АН Азерб. ССР, 1960, Т. 3, - 252 с.
9. Ульянищев В.И., Микофлора Азербайджана, Баку, Изд-во АН Азерб. ССР, 1962, Т. 3, - 276 с.

Таксономический анализ ржавчинных грибов, выявленных на территории НКР

Г.Маргарян

Резюме

Анализ130 видов ржавчинных грибов в 10 родах и 6 семействах, выявленных в НКР показал, что по числу превосходит семейство *Pucciniaceae*. Идентифицировано 3 рода и 109 видов, принадлежащих к данному семейству. По распространенности, 2 место занял род *Uromyces* /численность 20 видов/. Крайне редки анаморфные виды: всего 3 вида.

Из ржавчинных грибов, выявленных в НКР – 44 вида идентифицированы впервые. Большая их часть распространена по территории республики.

The Taxonomic Analysis of Rusts Revealed on the NKR Territory

G.Margaryan

Summary

The analysis of 130 species of rusts in 10 genera and 6 families in the NKR revealed that the most numerousis the *Pucciniaceae*.There were identified 3 genera and 109 species belonging to this family. On the distribution, the 2nd place is taken by the *Uromyces* /20 species/. Anamorphs are extremely rare: only 3 species.

Among the rusts revealed in NKR, 44 were identified for the first time. Their most part is widespread on the whole territory of the republic.